

ժ/ Վահկա բերդի գրավումը Կոստանդին Ա-ի կողմից:

1	2	3	4	5	6	7	8	9	10

12. Համապատասխանեցրե՛ք հասկացություններն իրենց բացատրությունների հետ.

1. Կիլիկյան Հայաստանի արքունի քարտուղարության գլխավոր պաշտոնյան
2. քաղաքապետը Բագրատունյաց Հայաստանում
3. արքունի պալատի կառավարիչը Կիլիկյան Հայաստանում
4. շրջիկ մանրավաճառ Բագրատունյաց Հայաստանում
5. քաղաքապետի օգնականը հարկահանության և այլ գործերով Բագրատունյաց Հայաստանում
6. արքունական հեծելազորի հրամանատարը Կիլիկիայում

ա. փերեզակ բ. սպասալար գ. մուիթասիբ դ. սենեսկալ ե. շահապ զ. կանցլեր
1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

1	2	3	4	5	6

13. Տրված պնդումների համար ընտրել «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» տարբերակներից մեկը:

- ա/ Հայաստանի ազատագրության Հյուսիսային ծրագրի համաձայն՝ Արցախի մեղիքներից մեկը պետք է դառնար Հայաստանի թագավոր:
- բ/ Հնդկահայերը, ոգևորված Հովսեփ Էմինի քարոզչությունից, որոշում են Հայաստանի ազատագրման նպատակով բանակ ստեղծելու համար նրան տրամադրել 12 հազար ռուբլի, իսկ մեծահարուստ Գրիգոր Խոջաջանյանը համաձայնվում է այդ գործի համար կտակել իր ունեցվածքի մեկ երրորդը, եթե կաթողիկոս Սիմեոն Երևանցին տա իր համաձայնությունը:
- գ/ Հ. Արղությանի և Հ. Լազարյանի ծրագրի համաձայն՝ նախկին հողատերերին վերադարձվելու էին իրենց կալվածքները, սակայն առանց գյուղացիներին ստրկացնելու իրավունքի:
- դ/ Հայաստանի ազատագրության Հարավային ծրագրի համաձայն՝ առաջարկվում էր Հայաստանի և Ռուսաստանի միջև սահմանել ազատ երթևեկություն:
- ե/ Հայաստանի ազատագրության Հարավային ծրագրի համաձայն՝ Հայաստանում 6 տարի ժամկետով լինելու էր 20 հազարանոց ռուսական զորք:
- զ/ Մովսես Սարաֆյանի ազատագրական ծրագրի համաձայն՝ առաջարկվում էր Սև ծովի ափին Հայաստանին տրամադրել նավահանգիստ:

1,5 մ. (յուրաքանչյուր ստույգ պատասխանը՝ 0,25 մ., ոչ ստույգը՝ — 0,25 մ., իսկ բոլոր «Չգիտեմ» պատասխանները՝ 0 մ.)

	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Սխալ է						
Չգիտեմ						

14. Տրված պնդումների համար ընտրել «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը:

- ա/ 9-րդ դ. վանական և տաճարային դպրոցների հիման վրա ձևավորվում էին վարդապետարաններ:
- բ/ Սանահինի վարդապետարանում իրենց գիտամանկավարժական գործունեությունն են անցկացրել ժամանակի նշանավոր գործիչներ Վարդան Այգեկցին, Հովհաննես Երզնկացին և Թովմա Մեծոփեցին:
- գ/ Նոր Գետիկի վարդապետարանում կրթություն է ստացել նշանավոր պատմիչ և կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին:

դ/ Կաթոլիկ քարոզիչների հիմնած հոգևոր-մշակութային կենտրոններից էին Ծործորի և Քոբայրի դպրոցները:

ե/ Սկևռայի դպրոցը, որտեղ դասավանդվող առարկաների շարքում առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում մանրանկարչությունը, երաժշտությունը և գրչության արվեստը, հիմնադրել է Ներսես Լամբրոնացին:

զ/ Հայ քանդակագործության, ճարտարապետության և հատկապես աստվածաբանության զարգացման գործում մեծ դեր խաղաց Հռոմկլայի կաթողիկոսարանին կից դպրոցը:

1,5 մ. (յուրաքանչյուր ստույգ պատասխանը՝ 0,25 մ., ոչ ստույգը՝ — 0,25 մ., իսկ բոլոր «Չգիտեմ» պատասխանները՝ 0 մ.)

	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Սխալ է						
Չգիտեմ						

15. **Շարադրանք 1. ներկայացրե՛ք Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում:**

2,5 մ. (ստուգման նվազագույն քայլը՝ 0,25 մ.)

16. **Շարադրանք 2. ներկայացրե՛ք Տիգրան Բ Մեծի տերության տարածքը, բնույթը, բնակչությունը: Տիգրանակերտի կառուցումը:**

2,5 մ. (ստուգման նվազագույն քայլը՝ 0,25 մ.)

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞րն է Մարաստանի մայրաքաղաքը. 0,5 մ.
 ա/ Սուսա բ/ Էքբատան
 գ/ Պերսեպոլիս դ/ Բաբելոն
2. Ինչպե՞ս էր կոչվում Սոլոնի զբաղեցրած պաշտոնը. 0,5 մ.
 ա/ կոնսուլ բ/ տիրան
 գ/ ժողովրդական տրիբուն դ/ արքունտ
3. Ե՞րբ է ավարտվել Երեսնամյա պատերազմը. 0,5 մ.
 ա/ 1618 թ. բ/ 1638 թ.
 գ/ 1648 թ. դ/ 1658 թ.
4. Ո՞վ է Ֆրանկական թագավորության հիմնադիրը. 0,5 մ.
 ա/ Մերովե բ/ Քլոդվիգ
 գ/ Կարլոս Մարտել դ/ Պիպին Կարճահասակ
5. Ինչպե՞ս էր կոչվում Հին Հռոմի խոշորագույն ամֆիթատրոնը: 0,5 մ.

6. Համապատասխանեցրե՛ք պատմական գործիչներին իրենց պետության հետ. 1 մ.

1. Մ. Ալի
2. Կ. Մետերնիխ
3. Շ. Մ. Թալեյրան
4. Դ. Լ. Ջորջ
5. Օ. Բիսմարկ

ա. Ֆրանսիա բ. Գերմանիա գ. Անգլիա դ. Եգիպտոս ե. Ավստրիա

1	2	3	4	5

7. Տրված պնդումների համար ընտրել «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը:
- ա/ Ռամզես Բ-ի օրոք (Ք.ա. 1263-1234 թթ.) Եգիպտոսը կարողացել է տարածաշրջանում ռազմական հավասարակշռության հասնել Խեթական թագավորության հետ:
- բ/ Տրայանոս կայսրը (98-117 թթ.) նվաճել է Գալլիան, Դակիան, Միջագետքը, Եգիպտոսը և պարթևների մայրաքաղաք Տիգրոնը:
- գ/ Խաչակրաց չորրորդ արշավանքի ժամանակ խաչակիրները գրավել են Կոստանդնուպոլիսը:
- դ/ Սրբազան հռոմեական կայսրության հիմնադիրը Կարլոս Մեծն էր:
- ե/ Բյուզանդիայի Հուստինիանոս Ա կայսրը (527-565 թթ.) ստեղծել է «Քաղաքացիական իրավունքի հավաքածու» կոչվող օրենքների ժողովածուն:
- զ/ Ռուսաստանի տիրակալներից առաջինը ցար տիտղոսն ընդունել է Պետրոս Առաջինը:

1,5 մ. (յուրաքանչյուր ստույգ պատասխանը՝ 0,25 մ., ոչ ստույգը՝ — 0,25 մ., իսկ բոլոր «Չգիտեմ» պատասխանները՝ 0 մ.)

	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Սխալ է						
Չգիտեմ						

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

05.03.2019 թ.